

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ»,ի
Աղեֆանգրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Ղրր.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է



ՓԻԻԿՆԻԿ

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8
ԿՈՎԿԱՍ
ՏՅՏԵԿԱՆ Բայլ. 6



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ԴՐՈՒՇ ՈՂՋ

Բ. ՏԱՐԻ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 16

ԱՆԹԱՂ ԴԻԱԿԻ ՄԸ ՎՐԱՅ

(ՄՏԱՏԻՊԱՐԷՍ)

Արիւնոտ է պատմութիւնը Դիակին, որ դեռ պարտուելու երևոյթն ունի գեանին երեսը, որուն վրայ քաշքշած է երեսունէ աւելի մութ տարիներու գձուձ ու վտանգաւոր գոյութիւն մը։ Այս դիակը, հակառակ փառութեան ու նեխումին, որ արդէն սկսած է բանիլ իր ներսիցին. հակառակ իր արտաբերած գարշ հոտին, որ բռնած է ընկերային հրապարակը, ցաւալի և ամօթալի՝ խոստովանութիւն, կարգ մ'ապուշ, կոյր ու սորուկ արարածներու ըղբղին վրայ տակաւին կը շարունակէ թողուլ տխուր տպաւորութիւնը կեանքի մնացորդի մը. անոնց, այն մտքի խեղճ հիւանդներուն համար դեռ կ'ապրի Դիակը։

Ո՞վ էր սակայն։

Չար ու տգեղ ըսպէի մը ծնունդը, այսպէս ուզեց բաղդը. պէտք էր որ լոյս աշխարհ գար այսպիսի հրէշուկ մը, մարդակերպ մը, մեր վերջին

քառորդ դարու պատմութեան մութ ու խորունկ պարագները լեցունելու համար։ Իր համասեռներուն հետ։

Մեր մոլորակի դժբաղդ բնակիչներուն մէջէն ասի մին է քանի մը բացառութիւններէն, որ դժբաղդներու աչքերէն թափած արցունքներուն կամ գրկուածներու կուրծքէն հոսած արիւնի կաթիլներուն մէջ իր պապակի յագուրդը փնտռած ըլլայ։ Հայկական կարմիր ու սև տարիներուն մէջ, երբ ժողովուրդը կը տապկուէր. երբ բանտերը կը լեցունէին անմեղներու խումբերը. երբ մեր դպրոցներուն մէջ կ'արգելուէր հոյ պատմութեան ուսուցումը, շատ մ'ուշիշ նուիրական բաներու հետ. երբ ամբողջ երիտասարդութիւն մը, կանգուն, ընդվզումի մկրտութիւնը կը մկրտուէր, արիւնի աւազանին մէջ. երբ, վերջապէս, ազգ ու եկեղեցի, հոգևարքի քրտինքը կը քրտնէին, մխրակոյտներու փոխուած քաղաքներուն ու գիւղերուն, հայրենիքի անհուն աւերակին վրայ նստած, սգաւոր ու վիրաւոր. այս մարդուկը,

Պօլտոյ առևտրական հրապարակին մէկ մութ անկիւնը կծկտած, վաճառականի մը խրթին տետրակները կը... բռնէր իր հաշուակալի տաղանդովը:

Վաճառականի գրագիր մ'էր պարզ, դիշեր ցերեկ թուանշաններու ու գիծերու վրայ յառած ինքի փոս աչքերը, որոնց համար կը պատմուի թէ՛ Հաւատաքնութեան խարոյկները վառողներէն փոխ առնուած են. ա՛յնքան դաժան է և տարածմ' անոնց նայուածքը: Բայց երբ առևտուրը սնանկացաւ ՚ի թուրքիա. երբ գաւառներէն գաղթեցան տեղալէ շահու աղբիւր ապրանքներ. երբ ազատ փոխանակութիւնը վտանգուեցաւ, տիրող անիշխանութեան երեսէն. այն ատեն, գրագիրը դարձաւ յեղափոխական, մտաւ աղգային Ս. գործին մէջ իբրև արհեստաւոր յեղափոխութեան, ապրեցաւ հոն տարիներով. մինչև վեջերս ալ կ'ապրէր, ու գեռ շատ պիտի ապրէր, կ'ըսեն, եթէ... անգութ իրողութիւնները չը գային յանկարծ յեղաշրջելու կացութիւնը, և դիմակազերծ ընելու այդ արհեստով յեղափոխականը, որ ճշմարիտ պատուհաս մ'եղաւ Ս. գործին. ու, ինչպէս որ հիմայ փորձանք մ'եղած է Ազգին գլխուն:

Հատորներ կաշելի է լեցնել այս Անթ.Ա.Ղ. Դի.Ա.Կի.Ն ազտոտ պատմութեան մանրամասնութիւններովը, բայց, աղի ժամանակի դործ է...:

Եթէ կայ արգահատելի ու նոյնչափ ալ նողկալի բան մը, այդ դիակը մինչև հիմայ անթաղ թողուլն է. ամեն պարկեշտ ու ճշմարիտ Հայու համար վաղուց դադրած է գոյութիւնը անոր. կար ժամանակ մը, որ անոր դիակը, շատ բարձրէն կը դուռար ու կը պռուր. յեղափոխութիւն, ազատութիւն, նահատակութիւն, և ամենանուիրական բառեր. պատգամներ կ'արձակէր յեղափոխութեան ծրագիրներու և գործունէութեան սահմանին վրայ: Հիմայ անցած է ամեն բան. խաւարը լուսաւորուած է. թափանցուած է գաղութի բը:

Խլրտող դիակը չ'կրնար ա՛լ խաբել զգայարանքները, որոնք կ'զգան զազիր գարշահոտութիւնը անոր, չ'են խաբուիր անոր շարժումի նմանող երերումներէն, ո՛չ ալ կը հաւատան հիւժախտէ փճացած կոկորդէն ելած կազկանձումներոն. բոլորը մեքենական է անոր ներսն ու դուրսը, անոր բոլորտիքն ու անոր վրայ. զսպանակալ կը դառնայ, ա՛լ ինք ինք տէրը չէ՛, ո՛չ ալ պատասխանատուն. առաւօտը միապետական է, կէս օրը ռամկավարական. իրիկունը՝ անիշխանական. դիշերը՝ յեղափոխական, ցերեկը՝ հակաօրհակական. երէկ հերոս էր, այսօր դիւանագէտ մը, վաղը լրտես պիտի ըլլայ, եթէ գեռ անթաղ մնայ...:

ՔՐՈՆԻԿ

Ա.ԶԳԱՅԻՆ

— Զեթուն ու Սասուն. Բո Արմէնիայի հայկական ընդհանուր շարժերու կրկնութեան մասին բրած գուռակութիւնները կ'սուգուին հետզհետէ: Ամեն Հայ գիտէ և համոզուած է ներքնապէս թէ Երլսրդի փառապաշտութիւնը կը կայանայ Զեթունն ու Սասունը, հայութեան այդ երկու միակ ամուր կեդրոնները ջնջելու. և այդ չար դիտմանը գործադրել սկսած է արդէն: Բո Արմէնիան կարգանք:

«Զեթունի բոլորսիքը շարքէ շարք կը սեղմուի երկաթէ օրջանակը, զօրանցներ ու բերդեր կը ցցեն իրենց գագաթները, կ'իբխեն կիրներուն վրայ: Սասունի մէջ օր մը չ'անցնիր որ սպանութիւն մը գործուած չ'ըլլայ Գաղապիսի ծառայող փողոսիցներէն, փառապաշտութիւն թէ զինուորական, Հաւիտիսի թէ կանոնաւոր զօրք. մէկդի թողունք կանոնաւոր շարժերը Յրաղանքի ու Շուքումերկի:

Թիֆլիզէն ֆառուած հեռագիր մը նեզրսագոյն մանրամասնութիւնները կուսայ համիտեան ծրագրին գործադրութեան վրայ:

«Նոր խոհուրթիւններ գործուեցան Մուշի քաղաքայր. համիտիյէ գնդերով ու կանոնաւոր զօրքերով անլի զօրացած հրոսակներ Յուլիս Յէն ի վեր կ'աւերեն, կ'սպաննեն:

Աւերեցին շատ մը գիւղեր. . բնակիչները կը փախչին լեռները: Քուրդեր ու զօրքեր հասած են Վանէն ու Պիթլիսէն եւ կը գրաւեն Սասունի բարձունքը, ուր բռնի շինել սալ կ'ուզեն զօրանցներ: Տալուրիկ, Կէլի-Կուզան, Շենիկ: Ժողովուրդը սարսափած, կը մերժէ (զօրանցներու շինութիւնը), խնդրելով հիւպատոսներուն պաշտպանութիւնը, գաղթելու համար: Տալուրիկ հիմնայասակ կործանեցաւ եւ Խիյանլի ցեղախումբն եկաւ հաստատուեցաւ հոն. բնակիչները կը փախչին լեռները»:

Կործանուած գիւղերը Մուշի դաշին մէջ են բոլորն ալ. մանաւանդ Շեխաշանը, որ կարեւոր հայաշատ կեդրոն մ'է:

Ահաւասիկ նախաբանը նոր Զարդերու, որոնք քերես գերագնացեն 1894 - 95 - 96 ինները, նրբացած ու կասարելագործուած բարբարոսութեան մը նորագիտ խոցանագումներով»:

Ու Եւրոպա դեռ կը լռէ. . .

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

— Բ. Խիվը Բարիզ հասած է ամսոյս 1ին եւ Կ. Պոլիս մեկնած է 4ին:


— Բիրէայի մէջ ռուսական նաւակայի մը հաստատութիւնը կը հերժուի Արէնի կառավարութեան կողմէն:

— Լոնտոնի 31 Օգ. ի թիւով ֆառուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Սուլթանը Թուրքիա բնակող կրօնային կարգերուն վրայ տուրքեր պիտի դնէ: Թայիզ Բարիզէ կ'իմանայ թէ՛ ասիկայ Օսմ. ազգայնապաշտ նոր ֆաղափակաւորութեան հետ կայ ունի:


— Թայիզ կ'իմանայ Մոսկուայէ թէ Թիպէտական Առաքելութեան մեկնումը խորհրդաւոր է: կը կարծուի թէ՛ ցա-

մաքի համբով պիտի վերադառնայ ռուսական գնդերու ուղեկցութեամբ, որոնք մեծ մասով խուզարկուներէ պիտի բաղկանան եւ պարզ զօրքերու դերը պիտի կասարեն:

— Կ'երեսայ թէ Տօգդ. Լէյսու զուրջանքեր ըրած է Պ. Տէլֆաւէի եւ Կոստա Լամսօրճի ֆով, որպէս զի Քրուկէր ընդունուի Զարէն, Յրանսա այցելութեան առթիւ: Զարը Տիւնֆէրէ պիտի հասնի Սեպտ. 18ին: Նախագահ Լուպէ պիտի դիմաւորէ ծովին բացերը:



ԲՈՂՈՔԱԳԻՐ



. . . Խմբագիր Տէր.

Կը խնդրուի ձեր մեծապատուութենէն որ հանիք ձեր պատուարժան թերթի «Փիւնիկ» ի մի անկիւն նուիրել, մեր առ ձեզ ուղղեալ հետեւեալ գրութեան:

Անցեալներ՝ կարդացիմք «Փիւնիկ» ի 8 ռդ, թիւին մէջ, տեղույս Պօղոսեան Երկսեր վարժարանին ամավերջի հարցախնդրութեանց վերաբերեալ յօդուած մը, նաեւ Քրոնիկ ազգային, վերնագրով մի սխառ վիրջաբան, Պօղոսեան Վարժարանի հարցախնդրութեան վերջի օրվան բանախօսութիւն, որու բովանդակութիւն ամբողջովին եղբօրս կը պարտէ:

Ահա ՚ի պատասխան մեր եղբօր վառ ըզգացման, պատուարժան հոգաբարձուն որ եւ է ֆննութիւն չ'կասարած իմ հասցէով մի նամակ ուղղած է որու պատճենն՝ առանց բառ մը փոխելու ձեզ կ'ուղարկեմ ՚ի հրատարակութիւն:

«Առաջնորդարան Հայոց 7 Օգ. 1901

Աղէֆանդրիոյ, թիւ 618 Ա.ս.

Պ. ՄԿՐՏԻՉ ՇՍ.ՏԱ.ԽՅԵԱՆ

«Ձեր եղբայրը Պետրոս Շասախցեան, ուսանող տեղիս Ա.զգ. Վարժարանին, ամավերջի ֆննութեանց վերջին օրը,

Սրբազան Առաջնորդին, ուսուցչական մարմնին, հրախրեալներու եւ երկսեռ առակերներու ներկայութեան համարձակած է խիստ անպատեան լեզուով իր ուսուցիչները եւ վարժարանին վիճակը հրապարակաւ քննադատել:

Ձեր եղբոր այս արարքը կարգապահութեան տեսակէտով աններելի յանցանք մը ըլլալով, որոշուած է վարժարանէն արտաքին զինքը յորինակ այլոց եւ ի պատիժ իր ըմբոսութեան:

Մնա՛մ յարգանքով

Հոգաբարձու Ազգ. Երկ. Վարժարանաց-Տիգրան Կամսարական»:

Ուստի մենք ալ պարտք կը համարինք, իբր Եղբայր եւ թէ պատշաճ այն քաջ արի եւ զգայուն զոյգ որբերին, որոնց ուսման եւ դաստիարակութեան ամէն միջոցներ յանձն առած եմ, այս օր Պողոսեան չ'ըլլայ, Գաղղիացոց, Իսալացոց, Յունաց, Անգղիացոց, վերջապէս ո՛ր որ անկէ դիմումներ ընել մինչեւ որ իրենց նպատակին հասցընեմ:

Բայց նախ հարցնել պատուաւորան հոգաբարձութեան՝ թէ ի՞նչ խղճմամբ անկեղծ պատասխանի ըզգացումը խեղդելով ուզած են արտաքին դպրոցէն, որոնք դեռ, 4 ամիս է տեղս ժամանել են եւ երեք ամիս դպրոց շարունակել:

Պէտք է ըսել որ Պողոսեան վարժարանի հարցաքննութեան ամբողջ օրերը բացակայ էի եւ պատահածներէ անտեղեակ, թէպէտ շատ կը փափաքէի ներկայ գտնուելու, սակայն երկու որբերի այսպիսի երկրի մէջ դաստիարակել եւ հայրենիքի պիտանի անդամներ առաջ բերելու համար ըստպարտուած ենք մեր համեստ գործով օր - 12 ժամ շարունակ գործելու: Վստահ լինելով սրբազան նախագահին եւ տիար խմբագիրներին, որ անաչառ կերպով կարող կը լինէին քննելու:

Իսկ՝ ձեր եղբորս մասին ըրած ամբաստանութեան, իբր թէ անպատեան լեզուով դպրոցի վիճակ հրապարակաւ քննադատելուն, ժողով վճռած է դպրո-

ցէն արտաքին, ընդունինք, սակայն ի՞նչպէս: Վեր յիշեցի թէ ներկայ չէինք, բայց պարտք կը թողում նոյն օրվան քննութեան սրահի մէջ ներկայ եղող Սրբազան Նախագահէն մինչեւ ժողովուրդի պատուաւորան խմբագիրներին. որ իրենց խղճի մտքով քննեն եթէ արժանէ պատժելու, պատժեն. իսկ եթէ ոչ, պատասխան:

Հարցնել. «Արդեօ՞ք իրեն խօսածների մէջ որ եւ է գեղծումներ ըրած էր. արդեօ՞ք հեմարտութեան դէմ մեղանչած էր. կամ թէ արդեօ՞ք ուրիշ թելադրմամբ խօսած էր. թէ ոչ իւր պատմածները իրողութիւններ էին, կամ իւր կարճ միջոցների ակամաստեւ եղած ու փաստերով ստեղծ հեմարտութիւններ էին, նաեւ իւր բողոք ո՛չ միայն իւր անձնական շահերին այլ ընդհանուր մանկանց օգտակար լինելու բողոքներ. վերջապէս դպրոցի ամբողջովին ապօրինի եւ անկանոն վիճակներ որ զինք թելադրած էր հրապարակաւ պարզել եւ բողոքի ծածկուած հեմարտութիւն երեսան հանել որպէսզի ամաչեն, բայց ի՞նչ. «Պիղատոսին հետ դաս ունենալէս վերջ որ ո՛ւ պիտի բողոքես, աւելի յիմար դաս եւ մեղադրելի կանուանես», ինչպէս որ պատահած են գաղթականութիւնէս ի վեր, եւ այդ պատահածներուն արդեօ՞ք ո՞վ է վկայ:

Ինչոր է. անգամ մ'ալ հարցնենք մեր Պատուաւորան Հոգաբարձու - Նախագահ Պ. Տիգրան Կամսարականին - չ'հասկանանք այն բարեսիրտ եւ Ազգասէր Կամսարական Պէյր որ 80 ական բուսակներին վանայ Ռուսական Փոխ. Հիւպատոսական պատշտով վարել է. եւ այժմս Սիրիայ (Պէրուք) կը գրտնուի - թէ ի՞նչ խղճի մտքով համարձակած էք ըստրագրել վերոյիշեալ նամակը, մինչդեռ դուք ամբողջ հարցաքննութեանց ներկայ գտնուած չէք եւ ոչ ալ ձեր ներկայութեան բանախօսը քննած էք:

Եւ անհա ձեր տարտնական արժէքը այսպէս անգիտակցաբար հրապարակաւ կը յայտնէ. ի՞նչ կը կարծէք, կը կարծէք թէ որք մը դպրոցէն արտա-

սելով ինք գինեհիղ կ'արդարացնէ
եւ կամ թէ դպրոցը բարեկարգ վիճակի
մէջ է, ըսել կ'ուզէ՛ք, ո՛չ ո՛չ, պարոններ
չարաչար սխալած կըլինի՛ք այդ կէտերի
մէջ, պէ՛տք է ըսել. եւ լաւ համոզուինք
որ դպրոցն է անկարգներ կրթելու, զգէ-
ներ ռովեցնելու, եւ ազգին պիտանի եւ
խելացի անդամներ առաջ բերելու տեղ.
Իսկ եթէ դուք այս ամենուն մէջ անկար-
ողէ՛ք, ալ ինչո՞ւ կը շարունակէ՛ք այդ
պաշտօն եւ սարեկան մի քանի հարիւր
ոսկիները իզուր կը փնայցնէ՛ք:

Ուրեմն ձգեցէ՛ք այն *նորք* եւ բարձր
պաշտօն, որուն անարժանաբար կոչուած
էք. չ'կարծէ՛ք թէ թափուր պիտի մնայ,
դեռ մեռած չէ հայ ազգին բազմաչար-
չար «Արծի» հայրենեաց Հայրիկ եւ իւր
սարիներէ ՚ի վեր պատրաստուած սանիկ-
ներ, որոնք մինչեւ հիմայ լուրթեամբ կը
գործեն, յետ այսու՝ ո՛ւր որ անկէ՛ լուր-
թիւնը յիմարութիւն կ'անուանեն:

Ուսի՛ք կուզեմ հրապարակաւ երկ-
նակի խնդրել սրբազան Առաջնորդէն,
Վսեմ. Թաղ. Խորհուրդէն, հոգաբար-
ձուէն եւ տնօրէն խմբագիրներէն, որ կոչ-
ուած էք արդարութեան, նեմարտութեան
լույս արծարծող *ղեկապարներ*, որ խղճի-
մտով եւ անկողմնակի բանախօս Պետրոս
Շասախցեանի դասը դասէ՛ք եւ դասա-
պարտէ՛ք, որպէս զի մի կարգ տրուի
խմբագիրների եւ ջրհանկիր գրագիրների
բերնի ծառան (ձիւք) չլինինք:

Նաեւ՝ ձեզ ալ կոչում կ'ընեմ յե-
ղափոխական անուան սակ գործող պա-
րոններ, բառական է, օտարին դղեակ-
ներ կառուցանել, լսարան-ընթերցարա-
նի, Թէասր էսէնի մէջ. *Ա/ըթ* ընտրելով
հայի ներկան ու ապագան, ու այլուր
անտեսուող մանտեսուող պատմութիւն-
ներով ժամանակ անցումներն եւ մեր
դարերէ կանգուն մնացած հայ-
րենի երկիր *թորք* բռնակալների ձեռք
խաղալիք դարձնենք, եւ ասորին օտար
միջավայրի մէջ մեր Սուրբ Տաճար ու
չեքմեռանդ ժողովուրդ օտարին մասնենք,
եւ մեր Եկեղեցին օտար լրեսներով
(պատասաներ) լեցնենք. ամօ՞ք ամօք-
Ա՛յլ հերիք է հերիք, աշխատինք նախ

կուսակցական չար ոգին մեր մէջէն
հեռացնենք, ազգային մտաւոր եւ բա-
րոյական, կրթական եւ ուսուցչական
մարմիններուն՝ կռուելով ուժսանք կրթել
մանուկներ եւ որբեր, դաստիարակել
մասաղ սերունդներ, ազգին պիտանի
անդամներ առաջ բերել, եւ անա նորա
մէջ է Հայի ներկան ու ապագան, նորա
մէջ կը գտնենք հայի կեանք, նպատակ
եւ սուրբ ազատութիւն:

ՄԿՐՏԻՉ ՇՍՏԱԽՅԵԱՆ

Աղեքսանդրիա 2 Սեպտ. 1901

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԲԱՒԻՉԷՆ

Յուլիսի 26ին տեղւոյս Հայ դադ-
թականութեան մէջ ցրուեցան՝ խումբ
մը բարիզաբնակ Հայերու կողմէ
Մ. Գալիաբճեան և Յ. Գայաեան ստու-
րագրութեամբ հրատարակելու, որով
ժողովուրդը «իւր ազգային արժանա-
պատուութեան հետ սերտ առնչութիւն
ունեցող ինդիւրներու վրայ» լսելու և
իւր բռնելիք ընթացքը որոշելու կը
հրատարակէր անխտիր:

Յուլիսի 31ին, երեկոյեան որոշ-
ուած ժամէն առաջ իսկ, հո՞ծ բազմու-
թիւն մը ողողեց Grand Orient ի երկ-
րորդ կարգի սրահը: Ժողովին կազմա-
կերպիչները վայրկեանական կարգա-
գրութեամբ մը ժողովուրդը փոխա-
զըրեցին մեծ սրահը:

Ներկայից միաձայն հաւանութեամբ
Պ. Մինաս Չերազ ընտրուեցաւ ժողովին
ատենապետ և Պ. Հ. Օտեան ատենա-
դպիր:

Պ. Մ. Չերազ երկու խօսքով յի-
շատակեց վերջերս ի Փարիզ կազմուած
Հայկ. Միութեան և անոր Տնօրէն ժո-
ղովոյ ինչ ինչ անդամոց շուրջը դար-
ձած բողոքները, և խօսքը առաւ
Պ. Գայաեանի:

Պ. Գայաեան ամփոփ կերպով
պատմութիւնը ըրաւ յիշեալ Միութեան
կազմութեան: Եւ այս առթիւ սուր

ակնարկութիւնները աւարտասահմանի մէջ կազմուած այն ընկերութեանց մասին որոնք իրենց «բան դործ ընել կ'ուզեն Հայը և հայկական դասը Եւրոպային ծանօթացնել»։ Ըսաւ թէ մեր հոգեշունչ Շնորհալիներուն, կայծուկրակ Բաֆֆիններուն, Պատկանեաններուն և ժողովրդային հէքիաթներուն սիրոյն համար չէ որ օտարազգիք պիտի փութան մեր փշկութեան, ոչ ալ մեր աղէտքին ու աւերին աշիւնոտ նկարագրութեամբը։ Պօէրները, այդ երէկի ժողովուրդը, մի՞թէ Շնորհալի ունէին. փիլիպեանները մի՞թէ Բաֆֆի ունէին. Գուպացիները մի՞թէ Պատկանեան ունէին։ Տիեզերքը բռնադատուցաւ համակրիլ այս ափ մը ժողովուրդներուն՝ անոնց հզօր կամքին ու զօրաւոր բազուկներուն համար միայն։ Լաւ կըլլայ որ Հայերս ամեն բանէ առաջ ինքզինքնիս ճանչնանք և լաւ ճանչնանք։ Ես այն հաստատ համոզումն ունիմ որ, յարեց ատենախօսը, մեր աղէտներուն առջև նիւթապաշտ Եւրոպայի ցոյց տուած շնական անտարբերութենէն յետոյ՝ Հայերը, հայկական գրականութիւնը (*) ու մեր ազգային դատը Եւրոպային ճանչցնելու շանքերը, քիչ բացառութեամբ, անհատական ախորժակներու և եսասիրական փառաւորումներու միայն կրնան ծառայել, պարզ խօսքով, կարգ մը Հայեր կը շահագործեն Հայուն աղէտքը։

Ատենախօսը յայտնեց թէ իրեն հետ խումբ մը Հայեր միւսնոյն կասկածը ունեցած են վերոյիշեալ Միութեան կազմութեան առթիւ։ Եւ այս կասկածը շեշտուած էր անոր համար, որ անուանապէս միայն գոյութիւն ունեցող ու կեանքին մէջ բնաւ հաշիւ չտուող ընկերութեան մը* (*Association Patriotique Arménienne*) գլխաւոր անդամները խմբովին կըտեղափոխուէին

(*) Երբ հաշիւ պահանջուի, այս ընկերութիւնը կը նախընտրէ «բարեկամական խմբակ» կոչուիլ։

նորակազմ ընկերութեան ծոցը, Ռուսահպատակ քանի մը Հայերու անուան շուքին տակ կծկտած՝ աւելի ապահով կերպով ազգային դատը ծառայեցնելու մէկն իր դանձին, ուրիշ մը իր անձին փառաւորումին, և ուրիշներ թերեւ բարի գիտումներու։

Պ. Գայանեան յայտնեց թէ ազգային շահերու հանդէպ փափկանքը կատուութիւն ներքի չըլլալով՝ խումբ մը Հայերու կողմէ Պ. Գալփաքեան և ինք՝ նորակազմ ընկերութեան հիմնադիրներէն Պ. Թամամչէֆի և Ղամբարօֆի մօտ գացին՝ իրենց բողոքն և ամբաստանութիւններն անվերապահօրէն անոնց ներկայացնելու — բողոք՝ ընկերութեան ապօրէն կազմակերպութեան համար, և ամբաստանութիւններ՝ նոյն ընկերութեան Տնօրէն ժողովոյ Ատենապետ Պ. Յ. Իսկէնտէրի և Ատենադպիր Պ. Ա. Չօպանեանի նկատմամբ։ Անկնդիրներու վրայ խորունկ տպաւորութիւն մը ըրին Պ. Գայանեանի հետեւեալ խօսքերը. «Պ. Պ. Թամամչէֆ և Ղամբարօֆ առաջին իսկ տեսակցութեան մեզի յայտնեցին թէ «մի քանի շաքաթուան դործակցութիւնը բաւական եղաւ մեզի այդ մարդոց մասին տխուր դաղափար մը կազմելու, արդէն զըջացինք առնուած տխուր քայլին վրայ, բայց մեղաւորը մենք չենք, մեզ լուսաւորող չկար։ Անպիտան տարրերը հեռացնելով պէտք է նորէն ընտրուի Տնօրէն ժողովը, դուք ալ մեզի կաջակցիք հարկաւ ևն ևն»։

(*) Չմոռնանք յիշել որ ընտրութեանց մասնակցելու համար Պ. Գայանեան եւս հրաւիրուած էր, թերեւս «opposition» ի մարդոց բերանը գոցելու համար, բայց Պ. Գայանեան այդ ապօրինութեան առջեւ իր բողոքը միացուց, Պ. Պ. Չեքազի եւ Բաամաչեանի բողոքներուն։ Այս բողոքները մեր Ռուսահայ աղբարներու աչքերը բանալու էին, բայց չի բացին... թերեւս հայերէն չհասկնալուն համար։

Այս տեսակցութեան արգիւնքն այն կ'ըլլայ որ նոյն օրը (28 Մայիս) Պ. Պ. Թամամչէֆ և Ղամբարօֆ կորոչեն հետևեալ օրը տեղի ունենալիք իրենց Տնօրէն Ժողովոյ նստին մէջ ամէն գնով թոյլ չտալ որ ցրուի ընկերութեան Շրջաբերական ծրագիրը, և աղդարարել ամբաստանեալներուն ու անոնց ընկերաց թէ լուրջ ամբաստանութիւններ ու բողոքներ յարուցուած են տեղւոյս հայ գաղթականութեան մէջ: Եւ արգարև հակառակ ամբաստանելոց պնդումին՝ չի ցրուիր Շրջաբերական ծրագիրը: Եւ Պ. Պ. Իսքէնտէր ու Զօպանեան իրենց գլխաւոր ամբաստանողներու երեսուելու խօսքին վրայ ստիպուած կը զիջանին Պատուոյ Ատեանի մը առջև ելլել: Իրենց կողմէ եղած այս զիջումը արգէն կարգ մը բարեկամ մտքեր բաւականէն աւելի գայթակղեցուց:

Պ. Գայանեան յայտնեց թէ այս խնդրոյ մէջ ինք և իրեն պէս մտածողները նախ իբր հայ, երկրորդ՝ իբր փառիզաբնակ հայ իրենք իրենց լեցուն իրաւունք կուտան իրենց աչքին առջև կատարուած ազգային ձեռնարկներուն վրայ հսկող աչք մը պտուցեելու, ըստ որում չարիքը տեսնել ու լռել, ոճրագործ լռութիւն մը պիտի ըլլար իրենց կողմէն, և թէ «Ալ ժամանակն հասած էր որ խորհրդաւոր, քմածին ու կասկածելի գործունէութեանց յաջորդէր ճակատարաց, պատասխանատու և անչահախնդիր գործունէութիւն մը»:

Երկրորդ ատճնախօսն էր Պ. Մ. Գալփաքճեան, Փարիզու հայ գաղթականութեան հնադոյն անդամաց մին: Պ. Գալփաքճեան խօսեցաւ պատուոյ Ատեանին, անոր արձակած վճիռներուն և վճռէն յառաջ ու յետոյ Պ. Թամամչէֆի կողմէն իրեն եղած ծանր յայտնութեանց վրայ:

Պ. Ա. Զօպանեան կ'ամբաստանուէր իբր անբարոյական, գող և ազգային խնդիրը շահագործող: Պ. Իսքէնտէրի մօտ (իբ իսկ խոստովանու-

թեամբ) իբր 100,000 ֆր. հանգանակուած էր, և որուն հաշիւը չ'էր տուած ազգին: Ասկէ զատ անոր անունը կից գտնուած էր 95-96ին Կովկասի մէջ գործուած խաչագողութեան մը հեղինակներուն անուններուն. վերջապէս, Պ. Իսքէնտէր իր մարդիկը միայն ներկայացնելով հոս ընկերութիւն մը կաշմել ուղղութեամբ, իչարն գործածած էր անոնց վտահալութիւնը ևն ևն:

Պատուոյ ատեանը կազմած են Պ. Պ. Թամամչէֆ, Ղամբարօֆ և Մ. Մինասեան, առաջին երկուքը ամբաստանելոց պաշտօնակից և անոնց կողմէն, վերջինը՝ անբաստանողներու կողմէն, որոնք բաւականացեր են միայն մէկով: Քննութիւնները տեւած են երեք օր եւ արգիւնքն այն եղած է որ երկու ամբաստանեալներ չ'են յաջողած ճերմակերես դուրս գալ պատուոյ Ատեանէն: Ամբաստանելոց երկու դատաւորները քօղարկեալ սակայն նորէն թափանցիկ բացատրութիւններ գործածած են թէև, բայց չ'են կրցած լռել թէ Պ. Ա. Զօպանեանի նուպար փաշայէն գրքի մը տպագրութեան համար ստացած գումարին և տպագրութեան բուն արժէքին միջև «փոքրիկ տարբերութիւն մը կայ: Ըսած են իրենց վճռագրին մէջ թէ «Պ. Զօպանեան աւելի ուղիղ գործած պիտի ըլլար եթէ այդ Զէյթուն գրքին հաշիւները իր անձնական հաշիւներուն չի խառնէր, ինչ որ վտասած է այդ գրքին տարածմանը»: Երրորդ դատաւորը, Պ. Մ. Մինասեան, առանձին դիտողութիւն կրնէ վճռագրին մէջ թէ «Պ. Զօպանեան գրքին տպագրութեան գինը 236 ֆր. չափազանցած է նուպարին և թէ ուրիշ զանազան զեղծումներ ալ գործած է»:

Պ. Գալփաքճեան կ'աւելցնէ թէ 1. նուպարէն իբր տպագրութեան ծախք 2000 ֆր. ստացած է Պ. Զօպանեան՝ 1764 ֆր. արժող գրքի մը համար (որուն թարգմանութեան վարձքը, 500 ֆր. զատէն ստացած էր ինք նոյն անձէն). 2. Փոխանակ գրամը ուղ-

ղակի տանիլ և տպագրիչին յանձնելու, սահմանած էր զայն իր պէսֆերուն. 3. Այս պատճառաւ Հայկ. գատին պրօպագանդին «սահմանուած այդ գրքերը պահուեցան տպագրչին մօտ մինչև այս յայտնութեանց երևան գալը»: Զէյթունի քաջերն և քաջագործութիւնները եւրոպային ճանչցնելու նպատակուած գործի մը վրայ կատարուած այս անորակելի երբեակ զեղծումը ցուրտ սարսուռով մը համակեց ուկնդիրները: Բայց գեռ աւելին կայ: Խնդիրներու քննութենէն երևան ելած է որ Պ. Զօպանեան Զէյթուն գրքին հեղինակին, Պ. Աղասիի իրաւունքն ալ յափշտակած է, այդ գրքին իբր 150 օրինակներու վաճառումէն գոյացած հասոյթն ալ իւրացնելով: Պ. Գալիաքճեան յայտնեց թէ «Պ. Աղասի իր յափշտակուած իրաւունքին տիրանալու համար մասնաւոր կերպով Փարիզ եկած է, և յուսալի է որ ալ ճամբան հարթուած ըլլալով՝ պիտի կրնայ իր գրքերը ազատել իրենց չորս տարուան բանտարկութենէն: Բայց հոս ալ զեղծումը միշտ զեղծում կրնայ անոր համար որ այդ գրքերը այսօր իրենց այժմեականութիւնը կորսնցուցած ըլլալով գրքթէ ոչինչի պիտի ծառայեն: Իրաւ է թէ մաս մը ճրի զրկուած ու մաս մընալ՝ ծախուած են, բայց մեծ մասը, 1000-1200 օրինակ, գեռ կրնայ փոշեթաղ:»

Շարունակելի


ԱԶԳ

Ճասը տարիներէ ի վեր ցաւալի դէպքերու զոհ դնացող մեր հարիւր հազարներով նահատակներու այնքան յարգելի յիշատակաց համար 1901 ի Սեպտեմբեր 8 ի կիրակի օրը, Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագէ վերջ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ պիտի կատարուի:

Ուստի՝ Հայ ազգի բոլոր պար-

տաճանաչ անդամները կը հրաւիրուին միացա՛ծ սրտով սգալու մեր մաքուր զգացմանց ա՛յնչափ մօտ եղող գերեզմանները:

Գահիրէ ԿԱՐԳԱԳԻՐ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ



— Ահաւստի՛ց թարգմանութիւնը Ռէֆօրմի 3 Սեպտ. նամակին, զոր խոստացած էինք հրատարակել:

ԲՈՂՈՔ ՄԸ

Ստացանք հետեւեալ նամակը քաղաքիս հայ հասարակութեան երեւելի անձնաւորութենէ մը:

Ազեքսանդրիա 3 Սեպտ. 1901

Պ. Տնօրէն,

Կը համորձակիմ Ձեր աչդոյ օրաթերթին ասպնջականութիւնը խնդրել ներկայիս հրատարակութեան համար որ կը յուսամ թէ պիտի արժանանայ Ձեր ա՛յնքան հեղինակաւոր ու անկողմնակալ խօսքի նեցուկին, քաղաքիս ընակչութեան մէկ մասին օգտին ու արժանապատուութեան համար:

Խորին սրտմտութիւն մ'առաջ եկաւ հայ հասարակութեան մէջ Պարս'Այեֆաւնէսթի 1 և 2 Սեպտ. ի Գրոնիկին «կայսերական օտարերէնութեան» մէջ երեցած ենթագրեալ «Յոյցի Զրոյցներ»ուն հրատարակութեան արձագանդէն:

Այդ թերթը հասկցնել կ'ուզէ թէ՛ կիրակի կատարուած պատարագ մը (օտարերէնութեան օր) քաղաքիս հայ եկեղեցիին մէջ, իբր թէ սպառնալիք մը եղած ըլլար քանի մը Հայերու կողմէ «ազմկայոյլ ցոյց» մ'ընելու, և թէ՛ ոստիկանութեան ձեռք առած միջոցներով առաջքն առնուած է եղեր գայթակղանքին եւ թէ հետեւաբար՝ «հոն ինչպէս աւե՛ն ուրե՛ք» կարգը վայրկեան մ'իսկ չէ՛ խանգարուած:

Ամեն պատուոյ ու սրտի տէր մարդ իրաւունք պիտի տայ նահատակ Ազգին ամեն զաւակին բողոքելու այն գարշելի զրպարտութեան դէմ զոր

Քարի յիշեալ հատուածիկը կը նետէ քաղաքիս հայ հասարակութեան և իր եկեղեցական իշխանութեանց վրայ, հագած ըլլալով անոնք այնչափ ցած ստորնութիւն և ամենահրէշային ամօթ, որ գոհաբանութիւններ մատուցանեն արեւշատութեան համար մարդու մը, որուն կը պատէն իրենց աշխարհա- ծանօթ ազէտներ:

Միւս կողմէ, ամեն եզրագագնակ անձ պիտի գիտնայ թէ՛ անկարելի է պահ մ'իսկ ընդունիլ թէ՛ Ն. Բ. Խաչ- վին լուսամիտ ու ազատական Կառա- վարութեան Հովանիին տակ, երբէք թոյլ տրուի ոչ ամբողջ գաղթականու- թեան մ'ամենասուբբ ու ամենաներքին զգացումներն առարկայ ըլլան աներաւ ու անորակելի ճնշումի մը:

Ուրեմն անկարելի է հաւատալ թէ՛ Հայոց եկեղեցւոյ մէջ կըրակի օրը ոստիկանութեան ցոյց տուած գործու- նէութեան նպատակն եղած ըլլայ ստի- պելը Հայերը ներկայ գտնուելու, ա- ռանց բողոքելու, պատարազի մը զոր Փար միայն կը կարծէր թէ կատարուած ըլլայ ՚ի պատիւ Սուլթանին:


Այս թափուած ուժը կերևի թէ յանիրաւի թեւադրուած է ուրիշ շար- ժակիթներէ, որոնք արժանի են նշա- նակելու ինչպէս իշխանութեանց նոյն- պէս հանրութեան ուշադրութեան, եւ որոնց վրայ մօտերս պիտի վերագառ- նամ եթէ թոյլ տաք:

Հաճեցէ՛ք ընդունիլ, Պ. Տնօրէ՛ն, իմ բարձր համարման հաւատարմը:

ՀԱՅ ՄԸ

ԱՂԵՔՍ. ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ԳԱՂՏՆԻՔԸ

(Շար. ԺԴ. բիւէն եւ վերջ)



Ա. Նախընթաց տարին՝ երբ հա- յերէն լեզուի դասերը վարժարանիս ծրագրին ու պահանջներուն համապա-

տասխան ըլլալէ հետի մնացած էին, (ինչ որ հաստատուած էր նմանապէս Պատ. Հողաբարձութեան Ատենապետ Մեծ. Տիար Լ. Աժադրեանի անձնական փորձով ու քննութեամբ) եւ գիտնա- լով հանդերձ թէ Տիար Մ. Առքա- նազը՝ Պատ. Բաղական Խորհուրդի Գարտուղա՝ Տիար Լ. Մկրտիչեանի ազգականութիւնն ու պաշտպանու- թիւնը կը վայելէ, և Հողաբար- ձութեան անդամներէն Տիար Տ. Կամ- սարականի մասնաւոր յարգանաց ու համաշման առարկայ է իշր իր նախկին ուսուցիչը, չվարանեցայ երբեք իրա- կանութիւնը պարզելու, և խնդիրը փակուեցաւ Տիար Կ. Կամսարականին հայերէն լեզուի դասերուն վրայ մաս- նաւոր հսկողութիւն յանձն առնելու երաշխաւորութեամբ:

Բ. Յարգոյ հասարակութիւնն իր աչքին առաջ ունի յիշողութիւններու մէջ տակաւին խիստ թարմ մնացած իշողութիւն մը, երբ ես ասիէ ինն ա- միս առաջ՝ պաշտօնակիցներէս մեծա- գոյն մասին և աշակերտաց պատիւը անպատկառ կերպով արատաւորելու ժպրհոյ Պ. Գ. Ոչտունիին վարժարա- ընէս գուրս նետուելուն համար՝ այն- չափ բուռն պայքար մղեցի, գիտնալով հանդերձ թէ նա Տիար Լ. Մկրտիչեանի պէս պաշտպան մը ունի, ոչ բաց ՚ի կուսակցապետ մը ըլլալէն՝ տեղույս Պատ. Թաղ. Խորհուրդի պաշտօնովը զինուած՝ կարևոր բայց տխուր դերեր կը կատարէ օեղական հանրային գոր- ծոց մէջ. գիտնալով հանդերձ թէ յիշ- եալ անարժան ուսուցիչը Պատ. Թաղ. Խորհրդոյ մէջ ալ պաշտպաններ ունի- և ի վերջոյ՝ չ'անսալով մինչև իսկ Պատ. Թաղ. Խորհրդոյ վսեմ, Փոխ-Ատենա- պետին պնդումին և տեղույս առաջ- նակաչ գազաշիններու յորդորներուն, հրաժարեցայ պաշտօնէս, խղճիս և պար- տականութեանս ձայնին հետեւած ըլլա- լու աղնիւ հպարտութեամբ: (*)

(*) Այս վերջին իրողութիւնն շուրջ տարի մը առաջ վարժարանին

Հոգեբանական և բժշկական տը-
խուր իրողութիւն մ'է, որ տեսակ մը
հիւանդներ դիմացինները կ'ուզեն վա-
րակուած տեսնել այն ախտով, որմէ
իրենք բռնուած են: Բայց մեր Պրն.
Յօդուածագիրը «գէշ մաշդ չ'ըլլալու»
քաղաքականութեամբ չ'չառանալով
չաա աւելի առաջ կ'երթայ. նա՛ ինչ-
պէս կրնէ ժողովուրդը՝ փօշիթիֆոս է:
Ահա ասկէ յառաջ եկած են իր յօդ-
ուածին մէջ անորոշ ասացուածքներ,
խօսքը 'ի հարկին տարբեր կերպով բա-
ցատրելու յարմար պարբերութիւններ
եւ. նա 'ի նկատի ունի շարունակ Պատ.
Թաղական եւ Խորհուրդի եւ Հոգա-
բարձութեան համակրութիւնները,
ապագայ կարգադրութիւնները, եւ
ինչպէս կերեի՝ ուսուցչաց ոմանց հա-
մար տակաւին վերջնական կարգադրու-
թիւններ չ'ըլլալուն, անոնց վերաբե-
րութեամբ նա զգուշութիւն կը բա-
նեցնէ, շարունակ այն չափով և ձևով
բացատրութիւններ տալով՝ ո՛ր չափով

նախկին Հոգաբարձութիւնը հրաժարած
ըլլալով՝ նոյն պաշտօնը յանձնուեցաւ
միայն Տիար Տ. Կամսարականին:

1899-ի Դեկտ. ին, վերջին Հոգա-
բարձական ժողովին մէջ Տիար Տ. Կամ-
սարականը յայտարարեց թէ՛ Թաղ.
Խորհուրդը հրաժարած ըլլալով՝ Սահ-
մանադրութեան տրամադրութեան հա-
մաձայն՝ ժողովին ալ պաշտօնավարու-
թիւնը դադարած կը համարուէր այլ ես
իբր նոյն Թաղ. Խորհուրդէն բոլորած
ստորագրաս մարմին մը: Հոգաբարձու-
թեան Ասեմապետ Տիար Լ. ԱժՏԷԷԻԱՆ
իրաւացի գտաւ Տիար Տ. Կամսարակա-
նին առաջարկը, եւ ժողովականները մի-
աձայն հաւանութեամբ վճռեցին տալ
իրենց հրաժարականները, զոր եւ կա-
սարեցին, Ասկէ ժամանակ մը վերջը
նորակազմ ներկայ առժամանակեայ
Թաղ. Խորհուրդը իր կողմէն միայն
Տիար Տ. Կամսարականին յանձնեց վար-
ժարանին Հոգաբարձութեան պաշտօնը,
զոր կը կասարէ մինչեւ ցայսօր:

Մ. Յ.

որ ինքը կարողացեր է թափանցել ա-
նոնց նկատմամբ ապագային հաւանա-
կանաբար ըլլալիք կարգադրութիւն-
ներուն:

Նոյն իսկ յիշեալ յօդուածին մէջ
անձա՛հ կերպով իմ անուանս շուրջը
յարուցուած աղմուկը, և յայտնի սու-
տերով ու խեղաթիւրումներով զիս
հրապարակային բացատրութեան մըլէլը
յիշեալ փօշիթիֆոս-ուրթեան հետեանքն
են: Յարգոյ ընթերցողները անշուշտ
կրնան ըմբռնել թէ՛ ատով ի՞նչ դիտում
ունի Պ. Յօդուածագիրը:

Իր յօդուածին մէջէն պիտի բե-
րենք մեր խօսքերուն ապացոյցը, որ
միանգամայն հակահարուածը պիտի ըլ-
լայ իր գրածներուն:

Ա. Պ. Յօդուածագիրը լեզուներուն
ընդհանուր յաջողութիւնը կը գովէ,
մայրենի լեզուի և Արաբերէնի յաջո-
ղութիւնը մասնաւոր՝ պէս և Ֆրանսե-
րէններ ընդհանրապէս կը յիշատակէ,
իսկ Անգլիերէնի (որ իր խօսքին համե-
մատ Ֆրանսերէնի պէս բաւական յա-
ջող անցեր է) անուրն անգա՛ւ յիշեցու
զգուշանայէն զաս, նոյն լեզուին դա-
սատուին աւանդած գիտութեանց սկար
մնայուն վրայ կը ծանրանայ եր-
կիցս:

Ինչո՞ւ այս չարամտութիւնը:

Որովհետեւ նախ՝ այդ ուսուցչին
հետ հաշիւներ ունի կարգադրելիք,
երկրորդ՝ անոր հրաժարումը կրնայ այլ
ևս կատարուած իրողութիւններու կար-
գը դասել:

Բ. Գիտութեանց ճիւղին դասա-
տուին վերաբերութեամբ այսպէս անու-
ղոք գտնուելով՝ անդին Տիկին Ա. ՈՒ-
նասեանը երկինք կը բարձրացնէ, որ
ըստ իւր ասութեան «չաա կարճ ժամա-
նակամիջոցի մէջ իր կարողութեան ա-
պացոյցը տուաւ արդէն և որու պաշ-
տօնավարութիւնը ընդհանուր դոհու-
նակութիւն պատճառած է», կամաւ
լուութեան տալով սակայն թէ՛ այդ կա-
րողութիւնը ո՞ր ճիւղերու կամ ի՞նչ
բանի մէջ երեցած է, և ի՞նչպէս այդ-
չափ սուղ ժամանակի մէջ այդ հմայիչ

աղբեցութիւնը ըրած է: Կը փորձուինք հարցնելու. ձեռագործի՞ ճիւղին մէջ արդեօք:

Գ. Պ. Յօդուածագիրը այս տարի սկսուած եւ երբեք ՈւՍՆՈՂ ունեցող արարերէն լեզուի փայլուն վիճակը՝ յայտնի կամ մութ՝ քանիցս կը յիշէ շեշտելով, մինչդեռ Մանկապարտէզին և Ընտելարանին վիճակը, որոնց ուսանողներուն թիւը (չորս 120) ամբողջ վարժարանին աշակերտաց թուոյն կէսէն շատ եւ շատ արելին կը կաշմէ, լուութեան կուտայ. լուութիւն մը, զոր չէ կարելի բացատրել ոչ անուշադրութեամբ և ոչ անհոգութեամբ:

Ինչո՞ւ այս կամաւոր կուրու-
թիւնը:

Ուշի ուշով կարգալով ամբողջ յօդուածը՝ ատոնց մասին երկու մութ ակնարկութիւններ կը գտնենք. «Երախայից դասարանը... զօրացնելու պէտք կայ», «Թաղ. Խորհուրդը այժմ կը փափաքի... մանկանց կրթութեան մասնաւոր ոյժ տալ»: Կը հարցնենք յարգոյ ընթերցողներուն, արդեօք Պ. Յօդուածագիրն «Երախայից դասարան» ըսած մութ, արտասովոր ու նորահնար բացատրութենէն կարողացած են ուրոշ բան մը հասկնալ. կրցած են ըմբռնել թէ՛ ակնարկուածը Մանկապարտէզն է, Ընտելարանը, թէ վարժարանին ամենավարի դասարանը, որ տարօրինակ կերպով Պատ. Թաղ. Խորհուրդին մասնաւոր ուշադրութեան առարկայ եղած է, թէ երեքը միասին:

Սակայն Պ. Յօդուածագիրն հանճարին գիւտն եզրղ այս «Երախայից դասարան» տարօրինակ բացատրութիւնը՝ տեսէ՞ք թէ ի՞նչ արգիւնքներ կ'ապահովէ մեր փոյթիքի միջոցով համարձակ՝ Պ. Յօդուածագիրն հնարաւորութիւն կուտայ վարժարանին այդ երեք մասերուն դասատուներուն հետ (որոնք որոշ կերպով իրենց վրայ չեն կրնար առնել հարկաւ այդ մութ և աննպաստ ակնարկութիւնը) յայտնի բաղխում ունենալէ խուսափելու. ինչո՞ւ «գեշ

մարդ» ըլլալ այսինչին (կամ իր պարագաներուն) հետ, որ գուցէ գալ տարի ալ կրնայ մնալ պաշտօնէութեան մէջ: Երկրորդ՝ Պ. Յօդուածագիրն մոգական դաւազանին տակ՝ 'ի պահանջել հարկին՝ այդ հրաշալի խօսքը կրնայ կերպարանափոխուիլ Մանկապարտէզի, Ընտելարանի, կամ առաջին դասարանի, եթէ ատոնց վարիչներէն մէկի կամ միւսի մասին յառաջիկայ տարեշրջանին սկիզբը կարգադրութիւն մ'ըլլայ: Երրորդ՝ եթէ պարագաներու բերմամբ այդ պաշտօնեաներուն անփոփոխ մնալը հարկ տեսնուի, Պ. Յօդուածագիրը՝ հանրութեան առջև ատոնց գէշ վիճակի մասին յայտնի խոստովանութիւն մը ըրած չ'ըլլալով՝ բարձրագոյն իշխանութեան իրաց վիճակը պահելու արդարացումը այժմէն իսկ ապահոված կ'ըլլայ:

Դ. Թէ՛ գիտութեանց ճիւղը և թէ՛ մայրենի լեզուն աւանդուած են երկու ուսուցիչներու ձեռամբ: Պ. Յօդուածագիրը չ'ուզեր յայտնի յիշել թէ՛ գիտութեանց ճիւղին կրտսեր ուսուցիչը, որ միանգամայն մայրենի լեզուին ալ վարի դասարաններուն: ուսուցիչն է, ո՞րչափ պատասխանատուութիւն և բաժին ունի առաջինին անյաջողութենէն և երկրորդին փայլուն յառաջդիմութենէն:

Ե. Պ. Յօդուածագիրը՝ որ ամենադառն կերպով կը դանդաթի վարժարանին ներքին կարգապահութեան բացարձակ տկարութեան մասին, ամենամեծ զգուշութեամբ կը խուսափի խնդրոյ առարկայ ընելէ թէ այդ յոռեգոյն կացութեան համար ո՞րչափ ամենալայն պատասխանատուութեան բաժին կ'իյնայ ընդհանուր ուսուցչական խումբին վրայ ընդհանրապէս եւ եօթ ամիսներէ ի վեր մանչերու սրահին հսկողութիւնը կատարող Ֆրանսացիին վրայ մասնաւորապէս, որուն խեղճ աշխատի մը և քանի մը Ֆրանսերէն բառեր ուսուցանելը այս տարի՝ իբր մեծ արդիւնք մը նկատելով՝ կը հռչակէ զայն առանց քաշուելու իբր կարող ուսու-

ցիյ, և անդին ալ ինք կ'ենէ նորագիւտ պատգամի մը պէս մեզ քարոզելու թէ՛ «ամեն ողջամիտ մարդ մէջի հետ պիտի համաձայնի երբ յայտարարենք թէ վարժարանի մը բարեկարգութեան հիմնաքարը աշակերտաց կարգապահութիւնն է»։ Արդ, Պ. Յօդուածագիր, եթէ համոզուած էք Ձեր խօսքերուն ճշմարտութեան, ուրեմն այդ Թրանսպարենտ ամենայետին անկարողութեան եւ ապարդիւն ծառայութեան մասին ասկէ աւելի փայլուն ի՞նչ պարտք կրնայ գտնուիլ, երբ եօթ անտուան պատկառելի ժամանակակից ողջի մէջ չէ կրցած գոնէ կարգապահութիւն մը մտցնել աշակերտաց մէջ, մինչև իսկ ընդունելու զիջանելով հանդերձ թէ՛ առաջուց կարգապահութիւնը տկարեղած ըլլար վարժարանին մէջ։ Բայց Պ. Յօդուածագիրը աչքերը կը գոցէ և ականջները կը խցէ այսպիսի անհաճոյ ճշմարտութիւններու հանդէպ. չէ՞ մի որ բարձրագոյն իշխանութեան ձեռամբ բերուած և անոր բարեացակամ համակրութիւնը կը վայելէ ելեր այդ Թրանսպարենտը։

Մեր նպատակն ըլլալով գաղափար մը տալ Պ. Յօդուածագրին երանգին և ճշմարտութիւնը տեսնելու և հասարակութեան պարզելու ըմբռնումին վրայ, կը բաւականանանք վերոյիշեալ օրինակներով, ընթերցողաց դատողութեան թողլով տակաւին յօդուածին մէջ գտնուող սոյնօրինակ մութ, երկդէմի, անորոշ և նպատակաւոր ակնարկութիւններն ու խօսքերը։

Պ. Յօդուածագրին սոյն ընթացքը տեսնելով կը յիշենք ակամայ մարդկային այն տխուր տիպարները, որոնք ներքնապէս կը ծաղրեն այն կարգ մը ասպունջներ, որոնց քով ճշմարտութիւն, ազնուութիւն, ուղղամտութիւն և ասոնց նման հիւնցած գաղափարներուն փարելու տխրաւնութիւն կայ տակաւին։ Իրենք, այդ տիպարները, կը նկատեն այդ գաղափարները իբր բառեր, իբր միջոցներ հասարակութեան աչքը շլացնելու, և կը գործա-

ծեն զանոնք իրենց անձնական շահերը ապահովելու, կիրքերը յագեցնելու, հեռաւոր նպատակներուն հասնելու, իրենց պետերուն բարի հայեցողութիւնը մուրալու համար ևն։ Թրանսպարենտ ական մարդիկներէն թիսօն ըսած է. «Լեզուն մարդու տրուած է ոչ թէ իր մտածումները յայտնելու, այլ ծածկելու համար»։ Հաւատարիմ այդ սկզբունքին՝ այդ սկեպտիկ տիպարները աւելի առաջ կերթան և իրողութիւնները կը ներկայացնեն ոչ թէ այն ձևով ինչպէս որ իրականապէս եղած են, այլ այն ձևով ինչպէս որ իրենք կը փափաքէին որ անոնք եղած ըլլային։

Վերոյիշեալ փաստերը բաւական են ամէն ողջամիտ մարդու համոզուելու համար թէ՛ Պ. Յօդուածագիրը ձգտած է նպատակաւոր կերպով խեղարխորելու իրողութիւնները, և այս միակ հանգամանքը նոյն իսկ (ուրիշ բաներ ի նկատ չ'առնելով) կատարեալ իրաւունք կուտայ մեզ ամենամեծ կասկածանօք վերաբերուելու իր վկայութիւններուն նկատմամբ վարժարանին մտաւորական և բարոյական կացութեան մասին։

Գուցէ և ատով կարելի ըլլայ միանգամայն բացատրել Պ. Յօդուածագրին ե. «Փիւնիկի» Տիար խմբագրին նոյն նէութի վրայ այդ աստիճան տրամագծաբար հակառակ վկայութիւնները. կրնանք ըսել ապահովաբար թէ՛ ամենագոյնն քսցառութեամբ Տիար Խմբագրին ընտելութեանց ոմանց մասին յայտնած նպատաւոր գաղափարները, Պ. Յօդուածագրին կողմէն հակառակ կերպով ներկայացուած են, և աննպատակները՝ նպատաւոր (*)։ Երկու իրա-

(*) Կեղծանուն թղթակցին տեղեկագիրը կը լիցեցնէ բանտերուն ու ջարդերուն օրջանին՝ Պալսոյ թուրք լրագրներուն հրատարակած հեռագիրները. «Սայեյի Փասիշահիտ ասայիշ պերֆեմաչքը»։ Եւ սակայն ջարդը ջարդ էր. եւ իմ տեսածներս գրած եմ։

րու հակոտնեայ վկայութիւններ միանգամայն չեն կրնար ճշմարիտ ըլլալ իսկ մենք տեսնք թէ ի՞նչ է Պ. Յօդուածագրին վկայութիւններուն արժէքը :

Պ. Յօդուածագիրը ամենափափուկ մանկավարժական խնդիր մըն ալ կը շօշափէ իր հետեւեալ խօսքովը. «պատիժի պահար սեսալ մը անիշխանական ոգի մեցուցած է վարժարանի մէջ», առանց սակայն ճշգեւ (ինչ որ իր սովորութիւնն է) թէ ի՞մ ժամանակիս կ'անարկէ ատով, թէ ներկայ վիճակին :

Իրերս առաջ դաստիարակներու շատերուն գաղափարն այն էր թէ՛ պատիժը մեծագոյն միջոցն է աշակերտաց մէջ բարոյական կրթութիւնն արմատացնելու և վարժարաններու մէջ կարգապահութիւն ներմուծելու. սակայն անցան այդ երանելի դարերը, և այսօր՝ ինչպէս մեր, նոյնպէս ամէն ողջամիտ դաստիարակներու և նշանաւոր մանկավարժներու անփոփոխ համոզումն է, որ բարոյական դաստիարակութեան հիւսիսը ու գործնական իր սակեւորութեան հիւսիսը ուսուցչին իր սակեւորութեան սերնն ու գործնական է, իր բարի երանցիս վարժն ու բարձր երանցիս սիր մաքուր օրինակն է, իր՝ բարի ու շարք, գեղեցիկն ու սգեղը, ճշմարիտն ու սուրբ գիտակցաբար ուսանողաց ճանկցնելու հաւատ րոտ ջանքերն են : Մանկավարժութեան ապացուցուած ճշմարտութիւններէն մէկն է հետեւեալը. ուսուցիչ մը որ իր աշակերտները կը պատժէ յաճախ, նախ քան ինքն ինքն պատժէ : Պատիժը կը նմանի բժշկական բացառիկ վտանգաւոր գործողութիւններու, զոր կարելի է գործածել շատ քիչ անգամ և ամենամեծ զգուշութեամբ, երբ վերոյիշեալ միջոցներով ամէն յոյս կորուած կ'ըլլայ այդ բարոյական հիւսնողը բուժելու :

Իսկանելով այսպէս՝ իմ պաշտօնավարութեանս պատուաբեր է եթէ իմ ժամանակս պատիժները պակաս են եղած : Կը սխալիք չարաչար, Պ. Յօդ-

ուածագիր, եթէ կը կարծէք թէ «պատիժի պակասը անիշխանական ոգի ներմուծած է վարժարանին մէջ» : Այդ անիշխանական ոգին ներմուծուած դպրոցին մէջ, ոչ թէ պատիժի՝ այլ գաստիարակութեան ոգին ըմբռնուին պակասին հետեւանքն է, և գաստիարակին բացարձակ ապիկարութեան յայտնի նշանն է : Բնութիւն-խարաղանը ապստամբներու բանակներ միայն կը պատրաստէ :

Ձգելով դարերու փորձառութիւնը, ես նոյն իսկ ներկայ տարուան ընթացքին մէջ տեղի ունեցած դառն իրողութիւնները պիտի յիշեմ, երբ պատիժի որակին կատարութիւնը և քանակին բազմապատկութիւնը միանալով ուրիշ կարգ մը մեր վերջ յիշած թեւորութիւններուն հետ, Ձեր յսած անիշխանական վիճակը յառաջ բերին : Կը հարցնենք. Օր. Եւգենէ Կիւրճեանին (10-11 տարեկան) ձեռքերուն ետեւէն ծառի կապուելը՝ ուզուած ազդեցութիւնը յրա՞ւ իր կամ իր ընկերակցաց վրայ : Տիրան Կիւրճեանին ծնկադուճ կերած հարուածները, որոնք վանդալեան բարբարոսութիւնը կը յիշեցնեն, կարգապահութեան ստիպեց պիտի կամ իր ընկերները : Ասոնցմէ անելի սրտաճմլիկ եղելութիւններ, որոնք գժբազդաբար տեղի ունեցած են վարժարանին մէջ իմ հեռանալէս յետոյ, ի՞նչ բարոյական-կրթիչ ներգործութիւն յառաջ բերին աշակերտաց վրայ : Մարդկային գազանական բնազդները յատկանշող այդ պատիժի գրութիւնը՝ գոնէ այդ անմեղ, մատղայ, մեր ապագայ բազդը կազմելու սահմանուած քնքուչ էակներու վրայ գործադրելու վայրագ թելադրութիւնը մի՛ ներշնչէք հրապարակաւ :

Այո՛, Պ. Յօդուածագիր, պատիժի գրութիւնը կայ գժբազդաբար և պիտի մնայ աշխարհիս վրայ տակաւին երկար դարեր, բայց պատժոյ ենթարկելիքները այդ անմեղ էակները չեն . . . :

Ամբողջ յօտուածին մէջ եթէ կայ պարբերութիւն մը, զոր կրնանք շնորհաւորել, հետեւեալն է. «Պատ. Թաղ. Խորհուրդը աշխարհիս իսկ շուրջ միջոցներ

ձեռք առած է յառաջիկայ արեւշրջանին մէջ վարժարանը արեւի ԻՐ ԿՈՂՈՒՄԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ վիճակի մը վերածելու հաւար »: Միայն կը մազթենք որ այդ յայտարարութիւնն ալ ուրիշ խոստումներու քովը երթալով մեռեալ տառ չմնայ, այլ իրականանայ, և Պատ. Թաղ. Խորհուրդը վարժարանին բարեկարգութիւնը Պ. Յօգուածագրէն տարբեր ըմբռնելով՝ հետեւի քաղաքակիրթ ազգերու ծանր աշխատութիւններով ու փորձերով ձեռք բերած օրինակներուն:

Հրատ. Տնօ. Պօղ. Ազգ. Երկս. Վարժ. ՅԱԿՈՒ ՊԵՏՐՅԱՆ

Աղեֆս. 21 Օգոս. 1901

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ


(ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ՊԻԼԷՉԻՔՃԻ)

Աթէնքէն 17 Օգոս. թուականով քաջուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ յաւէտ Ողբացեալ հայ գրողէտ Տիգրան Երկաթի յիշատակին համար հոգեհանգիստ կատարուած է հոն գրագէտներու և տիկիններու ընտրեալ բազմութեան մը ներկայութեամբ:

Այդ հեռագիրը վերյուշումը կուտայ ամենէն պաշտուած հայ տաղանդին հսկայական գործունէութեանը, զոր ցոյց տուած է ա՛յնքան կարծատե կեանքի մը բեղուն շրջանին: Յոյները կը տօնեն, կը պաշտեն յիշատակը տիպար Հայու մը, որ իր գրական գեղեցիկ արտագրութեանց մէջ պաշտպանած է հէլլենութիւնն ու անոր դատը: Իսկ Հա՞յը. . . :


Փիւնիկի խմբագրութիւնը կը խոստանայ Տիգրան Երկաթի — որ 29 դարուններ հազիւ բոլորելէ յետոյ թառամեցաւ 1899 Դեկտ. 1ին — կենսագրական յուշերն ու Եւրպայի Մամուլին մէջ ստացած դիւրքը, հայրենիքին մատուցած ծառայութիւններն և ուրիշ գործերը մանրամասնօրէն և յաջոր-

դարար տալ Պատ. ընթերցողներուն, որոնք, անտարակոյս, հաւասարապէս կը փափագին որ հայ մտքերուն մէջ միշտ թարմ մնայ պաշտելի յիշատակը վաղամեռիկ Տիգրան Երկաթին: Անի՛ տիպար և օրինակ պէ՛տք է ըլլայ ամեն Հայու, որ կ'ուզէ մտնել աշգային-գրական սուպարէզը:



ՄԻՍԻԹԱՐԵԱՆՑ

ԵՐԿԵՐԻԻՐԱՄԵՍԱԿԸ



Վաղը կիրակի Սեպտ. Տին Վենետիկի մ. Ղազար կղզին աշտակարգ շքեղութեամբ մը պիտի տօնէ երկրորդ Դարաշարձը Միսիթարեան Պատկ. Միաբանութեան հիմնադրութեանը, որուն երկու դարերու անխափան տեւականութիւնն արդէն պարծանքի կոթող մը կրնայ ըլլալ անոր հիմնադրին, Մեծին Միսիթարայ անմահութեանը:


Այդ ազգային-գրական Մեծ Տօնին առթիւ Վենետիկի Տպարանը հրատարակեց շատ մ'երկեր, որոնց մէջ առաջինն է ՄիսիթԱՐԸ, բացառիկ պատկերազարդ թերթը, 232 էջերով, զարգարուած Վենետիկի Միաբանութեան կարևորագոյն անդամներուն պատկերներովը, սկսեալ Միսիթարէն, մինչև արդի մեծանուն միաբանները, իրենց կենսագրական ու գրական յուշերովը, որոնց գլուխը գրուած է ընդհ. Հայոց սրտին ու հոգիին մէջ միշտ ապրող ալեգարդն Հ. Ղ. Ալիշան, որ չ'նայելով իր խոր ծերութեան, տարուէ տարուի նոր հատոր մը կը նուիրէ ազգային գրականութեան:

Յուշափ ապրի հայ լեզուն ու ծաղկի գրականութիւնը, Հայութիւնը պարտական է Մեծ Սեբաստացիին ու անոր յաջորդաց Գործին: Ամեն Հայ երախտապարտ զգացումներ միայն կրնայ տածել դէպ ՚ի Վենետիկի Միսիթարեանները, երբ մօտէն ծանօթացած


այդ Պատկ. հաստատութեան պատմութեանը:

Եգիպտահայերս բնականորաբար օտար չը պիտի մնայինք այդ ընդհանուր հայութեան վերաբերեալ չքնաղ ծօնին, որուն անտարակոյս կ'զգանք մեծութիւնը:

Փիլիսիկ, թարգման Եգիպտահայոց լուսամիտ ու յառաջդիմական մասին անկեղծ զգացումներուն, կը փութայ հրապարակաւ խնդակցել վեներտի Պատկ. Միաբանութեան, իր հիմնարկութեան երկրորդ Գաղափարի հանդիսին առթիւ, ու կը մտալթէ որ Ազրիականի բաժնիչ կզգեկին այդ Գոհարը, զոր պարզեց Մեծ Մխիթարը, յաւիտեան շողջողայ 'ի փառս և 'ի բարգաւաճումն հայ դպրութեան:



ՓԱՐՈՍԸ ՎԵՐԱՎՈՒՅՆԱԼ




1898 ին դադարած «Փարոս» ի Հիմնադիր-Տնօրէն Տիար Յ. Ալիիարէ խմբագրութիւնս ստացաւ շրջաբերական մը, որով կ'աւետէ թէ՛ Փարոսը երեք տարի մտնելէ յետոյ նորէն պիտի վառի, և թէ՛ այս անգամ ձեռք բերուած են միջոցները, որով կարելի է ապահովցնել անոր կանոնաւոր հրատարակութիւնը:

ՓԱՐՈՍԻ Բ. Տարեշրջանի առաջին թիւը հրապարակ պիտի ելլէ, կ'ըսէ Հիմնադիր-Տնօրէնը, յառաջիկայ Սեպտ. 19ին 1901 և պիտի հրատարակուի շաբաթը երեք անգամ, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը, նախկինէն աւելի մեծ ծաւալով և Եգիպտոսի ու արտասահմանի լաւագոյն գրիչներու աշխատակցութեամբ:

Մեր ընթերցասէր հասարակութեան այս ուրախառիթ լուրը հաղորդելով՝ կը փութանք միևնոյն ժամանակ մեր անկեղծ խնդակցութիւններն ընել հրապարակաւ Փարոսի համակրելի Տնօ. Տիար Ալիիարի, մտալթելով որ Փարոսը պաշտպանէ ժողովուրդին իրաւունք:

ներն ու լոյս սփռէ բոլոր Եգիպտոսի Հայութեան վրայ:

Յաջողութիւն և յարատեւութիւն:



Դժբաղդ Արկած մը. — Տխրութեամբ կ'իմանանք թէ՛ Օսմ. Իրամատան սենեկապաններէն Տիար Յաջողութիւն Խորեանի 11-12 տարեկան Սարգիս անուն տղան, այս հինգշաբթի օրը տանիքին վրայ թռուցիկ վարած ատեն, տանիքէն վար կ'իյնայ և հիւանդանոց փոխադրուելէ 3 ժամ յետոյ կը մեռնի:

Մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք ծանրաթախիծ ծնողքին եւ կը յուսանք թէ՛ ասի գործնական դաս մը կ'ըլլայ բոլոր ծնողներուն, աւելի խնամով հսկելու այսուհետև իրենց զաւակներուն ամեն մէկ շարժումին ու քայլին վրայ:

Վերջին շուր. — Վիլհելմ մերժած է միջամտել և պատուիրած է Սուլթանին ժամ առաջ զիջում ընել Թրանսայի:


ՎՐԻՊԱԿ

Ներկայ թիւին «բողոք մը» նամակին մէջի պատահաբար կարգաւ պատահաբար զիջել:

Ներկայ 16 թիւը՝ 11 Սեպտ. ի տեղ կարգաւ 7 Սեպտ.

ԿԱԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇՍՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ



Այս նոր բացուած ճաշարանին առաւելութիւններն են. ծովեզերեայ օդ, ամենամաքուր սպաս, և խնամեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանաց մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշակով պատրաստուած, իրենց համեղ ու այլալան հանգամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Դիմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատըր փողոցին մէջ, Ղազարեան Եզրարյ Վաճառատան դիմաց. գնացէ՛ք, ճաշակեցէ՛ք և տեսէ՛ք:

SALAMANDER ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 Փրանք

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Ցամաքային փոխագրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիւնէլ առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսագոր-Փոխասնորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆ

Աղեփասնորդիս, պզտիկ Մեկշիէ Ապտասուսսա փողոց թիւ 10

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր գեղորայք, սրէսխաղիքներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ զեղերուն ինամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին:

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երևելի հայ սուներուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն:

L'ALLIANCE Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 Փրանք

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիւնէլ Հայկ. Մեծ Սրճարանը:

ՋԱՄԲԱՐՉՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ամեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու պատրաստ, կը վաճառէ. ապրանքները մաքուր, տոկուն ու ձեւուոր. կը մրցի բոլոր օտար վաճառատանց հետ, գիներուն ամենութեան կողովէն:

ՆՈՐ ՀՍՅԿԱՄԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մեկշիյէ Հայկ. Մեծ Մրճարանիկ ետին

Յաճախորդները պիտի գտնեն լավ ու օգուտ տեղ մը, մաքուր սպասարկութիւն, համեղ ու պէս պէս կերակուրներ, քաղցրաւենիք, միրգեր, ըմպելիք ևն. խիստ չափաւոր գիներով:

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի կանխիկ վճարումով ու դոհացուցիչ պայմաններով:

Այցելեցէ՛ք մէկ անգամ ու պիտի տեսնէք նոր ճաշարանին առաւելութիւնը: